# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/110-2»

ք. Երևան

<< 4>> մայիսի 2017 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **3615000** (երեք միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ **602500** ( վեց հարյուր երկու հազար հինգ հարյուր ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն ·մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N2.1, N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կատարող |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատի |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Ք. Երևան, 16 թաղ. 25 շ, 111 բն |
| ՀՎՀՀ 02593108 | «ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյան մ/ճ |
| Կենտրոնական գանձապետարան | Հ/Հ 163028038590 |
| | ՀՎՀՀ 27837851 |
| Գ.Չթրյան------------------------ | Ա. Ազիզյան-------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

Հավելված 1
« 04 » « մայիսի » 2017թ.կնքված
N «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/110-2» գնման պայմանագրի հավելված

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Չափաբաժնի անվանումը<br>**Շենգավիթ վարչական շրջան** | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ |
|---|---|---|
| 7 | Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության 2017թ, զորակոչային խաղեր (մինչև 05.11.2017թ.) | Շրջանային փուլին մասնակցում են վարչական շրջանի բոլոր հիմնական և ավագ դպրոցների աշակերտները: Ռազմամարզական խաղերի քաղաքային փուլին մասնակցում են վարչական շրջանում հաղթող երկու դպրոցների թիմերը: Անհրաժեշտ է ապահովել՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք՝ մրցավարական սեղաններ, աթոռներ, ավել, սավոկ, աղբամաններ, ձայնային տեխնիկա՝ 1 կվտ. հզորությամբ, 2 խոսափողով: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ, քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: Կազմակերպել խորհրդակցություն և վիճակահանություն միջոցառման մասնակից թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:Վերահսկել մրցավարների կողմից միջոցառման առաջնությունների արդյունքների անաչառ ամփոփումը: |
| 8 | Մրցույթ ՀՀ նախագահի Լավագույն մարզական ընտանիք մրցանակի համար (մինչև 20.07.2017թ.) | «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի նախնական փուլին մասնակցում են վարչական շրջանի 32 մարզական ընտանիքներ, մրցույթի քաղաքային փուլում մասնակցում են 12-ը մարզական ընտանիք, որի կազմում ընդգրկված է հայր, մայր և երեխա: Մրցույթն իր մեջ ներառում է՝ փոխանցումավազք, ուժային վարժություններ, վազք, պարանի ձգում: Քաղաքային փուլին մասնակցելու համար մասնակիցներին ապահովել մարզահագուստով՝ /կիսաթև մարզաշապիկ 12 հատ կապույտ գույնի 48-54 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք սպիտակ գծեր և մարզաշապիկի մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ, կիսաանդրավարտիք 12 հատ կապույտ գույնի 48-54 չափսի կիսասինթետիք կողքից սպիտակ երեք գծեր: Կիսաթև մարզաշապիկ 12 հատ կապույտ գույնի 42-48 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք |

| | | |
|---|---|---|
| | | տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ, կիսաանդրավարտիք 12 հատ կապույտ գույնի 42-48 չափսի կիսասինթետիկ կողքից սպիտակ երեք գծեր: Կիսաթև մարզաշապիկ 8 հատ կապույտ գույնի 34-40 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք սպիտակ գծեր և մարզաշապիկի մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ, կիսաանդրավարտիք 8 հատ կապույտ գույնի 34-40 չափսի կիսասինթետիկ կողքից սպիտակ երեք գծեր: Կիսաթև մարզաշապիկ 4 հատ կապույտ գույնի 38-42 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք սպիտակ գծեր և մարզաշապիկի մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ,կիսաանդրավարտիք 4 հատ կապույտ գույնի 38-42 չափսի կիսասինթետիկ կողքից սպիտակ երեք գծեր/:Մարզահագուստները պետք է լինեն չօգտագործված: |
| 9 | Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք համաքաղաքային փառատոն (մինչև 30.07.2017թ.) | Փառատոնին մասնակցում են վարչական շրջանի հավաքական թիմերը: Ներառում է «կաշվե գնդակ» ֆուտբոլ, «թռչող գնդակ» վոլեյբոլ, «Ոսկե զամբյուղ» բասկետբոլ, «Սրընթաց գնդակ» հանդբոլ, «Անիվ» հեծանվավազք, մարզատրամաբանական խաղեր՝ մարզաձևերը: Անհրաժեշտ է ապահովել՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք՝ մրցավարական սեղաններ, աթոռներ, ավել, սավոկ, աղբամաններ, ձայնային տեխնիկա՝ 1 կվտ. հզորությամբ, 2 խոսափողով: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ՝մրցավարների ընտրություն համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով: Քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: Միջոցառման մեկնաբանի ծառայություններ: Կազմակերպել խորհրդակցություն և վիճակահանություն միջոցառման մասնակից թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերահսկել մրցավարների կողմից միջոցառման առաջնությունների արդյունքների անաչառ ամփոփումը: Կազմակերպել առաջնության մրցանակակիրների պարգևատրում՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ նախապես համաձայնեցված ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, դիպլոմներով, պատվոգրերով և շնորհակալագրերով: |
| 10 | Սպորտլանդիա (մինչև 01.06.2017թ.) | Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված «Սպորտլանդիա» մարզամշակութային միջոցառում: Անցկացվում են սպորտլանդիական ծրագրով |

| | | |
|---|---|---|
| | | նախատեսված շարժական խաղեր, մրցավարների օգնությամբ: Մասնակցում են վարչական շրջանի թվով 10 մանկապարտեզի սաները: Յուրաքանչյուր մանկապարտեզի 8-10 երեխա: Մրցումներում ներառված են փոխանցումավազք պարկերով, աքլորակռիվ, գնդակի հափշտակում, հսկաներ և թզուկներ, գիշեր-ցերեկ: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Անհրաժեշտ են մրցավարներ, քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: |
| | ***Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան*** | |
| 16 | Լավագույն մարզական ընտանիք<br>Լավագույն մարզական բակ<br>Լավագույն մարզական համայնք /Հունիս/ | Վարչական շրջանում ՀՀ նախագահի մրցանակի համար նախատեսված՝Լավագույն մարզական ընտանիք՝ մրցույթի նախնական փուլի մրցում-ների կազմակերպման համար անհրաժեշտ է մասնակից թվով 12 ընտանիքներին ապահովել մարզահագուստով /տղամարդու, կանացի և մանկական/՝ մարզաշապիկ, կիսավարտիք, 48-56, 42-48, 36-46 չափսերի, 60-70% բամբակ, 30-40% սինթետիկ: Ընտանիքների մասնակցությունն ապահովվելու համար տրամադրել 2010թ-ից բարձր ՙԳազել՚ կամ ՙՖորդ՚ մակնիշի, բարվոք վիճակում գտնվող, նոր անվադողերով, օդորակիչ համակարգով համալրված, փափուկ նստատեղերով և 15 ուղևորների համար նախատեսված թվով 3 մարդատար միկրոավտոբուս: |
| 17 | Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք՚ համաքաղաքային բակային փառատոն /Մայիս-հունիս/ | Վարչական շրջանում ՙԱռողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք՚ համաքաղաքային բակային փառատոնի՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, հեծանվավազք մարզաձևերի և մարզատրամաբանական խաղերի մրցումների կազմակերպման համար անհրաժեշտ է ստեղծել մրցավարական և սպասարկող անձնակազմ (ըստ նորմերի սահմանված օրապահիկ): Վերոնշյալ մարզաձևերի համար մասնակիցներին ապահովվել կապույտ, սպիտակ, կիսաթև թվով 53 մարզական հագուստով /մարզաշապիկ, կիսավարտիք, գուլպա, 42-46 չափսի, 60-70% բամբակ, 30-40% սինթետիկ/ և մարզական գույքով /թվով 17 կաշվե որակյալ գնդակներ N5, N6/: Թիմերի մասնակցությունն ապահովվելու համար տրամադրել 2010թ-ից բարձր ՙԳազել՚ կամ ՙՖորդ՚ մակնիշի, բարվոք վիճակում գտնվող, նոր անվադողերով, օդորակիչ համակարգով համալրված, փափուկ նստատեղերով և 15 ուղևորների համար նախատեսված թվով 12 մարդատար միկրոավտոբուս: |

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Ձեռք բերվող ծառայության անվանումը | Նախատեսվում է գնել 2017թ. ընթացքում Ծառայությունների ձեռքբերման ժամկետ է սահմանվում / II-IV եռամսյակներ / |
|---|---|---|
| | Շենգավիթ վարչական շրջան | Գումար |
| 7 | Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության 2017թ, զորակոչային խաղեր (մինչև 05.11.2017թ.) | 330000 |
| 8 | Մրցույթ ՀՀ նախագահի Լավագույն մարզական ընտանիք մրցանակի համար (մինչև 20.07.2017թ.) | 369000 |
| 9 | Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք համաքաղաքային փառատոն (մինչև 30.07.2017թ.) | 900000 |
| 10 | Սպորտլանդիա (մինչև 01.06.2017թ.) | 120000 |
| | Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան | |
| 16 | Լավագույն մարզական ընտանիք Լավագույն մարզական բակ Լավագույն մարզական համայնք /Հունիս/ | 720000 |
| 17 | Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային փառատոն /Մայիս-հունիս/ | 1176000 |
| | Ընդամենը | 3615000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108
Կենտրոնական գանձապետարան

Գ.Չթրյան--------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կատարող**

Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատի
Ք. Երևան, 16 թաղ. 25 շ, 111 բն
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյան մ/ճ
Հ/Հ 163028038590
ՀՎՀՀ 27837851

Ա. Ազիզյան--------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 4 » «մայիսի » 2017թ.կնքված
N «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/110-2» գնման պայմանագրի հավելված

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Չ/Հ | Ծառայության անվանումը | | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| | **Շենգավիթ վարչական շրջան** | Հ/Հ 900022750518 | | | | | | | | | |
| 7-10 | Սպորտային միջոցառումների կազմակերպում | | 1284000 | 1284000 | 1431600 | 1431600 | 1431600 | 1719000 | 1719000 | 1719000 | 1719000 |
| | **Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան** | Հ/Հ 900032542160 | | | | | | | | | |
| 16-17 | Սպորտային միջոցառումների կազմակերպում | | 18960000 | 18960000 | 18960000 | 18960000 | 18960000 | 18960000 | 18960000 | 18960000 | 18960000 |
| | Ընդամենը | | 20244000 | 20244000 | 33276000 | 33276000 | 33276000 | 36150000 | 36150000 | 36150000 | 36150000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108
Կենտրոնական գանձապետարան

Գ.Չթրյան-------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատի
Ք. Երևան, 16 թաղ. 25 շ, 111 բն
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շահումյան մ/ճ
Հ/Հ 163028038590
ՀՎՀՀ 27837851

Ա. Ազիզյան-------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 2*

*<<____>> _____________20 թ. կնքված N ____________________*

*ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ___________________________

______________________________

հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ___________________________

______________________________

հվհհ_________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «               » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և

*Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N  եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալ մասին.*

*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
<< >> << >> 20 թ. կնքված
N ________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
--------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_________________________

ազգանուն, անուն

_________________________

ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_________________________

ազգանուն, անուն

_________________________

ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<4 >> մայիսի 2017 թ.

Ա/Ձ Աշոտ Աղիզյան Ազատի (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է <<Երևանի քաղաքապետարան>>* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ միջոցառումների կազմակերպման ծառայությունների ծառայությունների մատուցման >>* ձեռքբերման <<ԵՔ-ԲՇՁԲ-17/110-2>>* ծածկագրով բաց** գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ա/Ձ Աշոտ Աղիզյան Ազատի
Ք. Երևան, 16 թաղ. 25 շ, 111 բն
«ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյան մ/ճ
Հ/Հ 163028038590
ՀՎՀՀ 27837851

Ա. Աղիզյան————————
(ստորագրություն)
Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1] **N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատի

4. Վճարողի բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շահումյան մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 163028038590

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 27837851

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ 361500 / երեք հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր /

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում (տուժանք)

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/110-2

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>19.բ.<br>Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>18.բ.<br>Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր*